«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

## Ավարտական հետազոտական աշխատանք

**Թեմա՝** Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

**Հետազոտող ուսուցիչ՝** **Աննա Մարտիրոսյան**

**Դպրոց՝** Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց

**Վերապատրաստող՝** Լիլիթ Չալյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... ……3

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԱՐՔԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1 Արժեքային համակարգի ձևավորումը տարրական դպրոցում.....……6

1.2 Մանկական ստեղծագործությունների դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում .....……15

ԳԼՈՒԽ 2.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1 Մայրենիի դասագրքերն իբրև արժեհամակարգի ձևավորման հիմք.....……19

2.2 Արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները ..... ……26

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... ……32

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....……33

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդե-սերունդ: Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբ-նոցը դպրոցն է: Ուսումնառության ողջ գործընթացում աշակերտները ձեռք են բերում ոչ միայն բազմապիսի գիտելիքներ, կարողություններ, աշխարհաճանաչողություն, այլև անձնային բարձր որակներ: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցու-թյան արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յու-րացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակեր-պող ուսուցչի փորձառությամբ: Կրտսեր դպրոցականների զարգացման գործընթա-ցում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում երեխայի զարգացման լայն հնարավորությունների մասին: Այս ժամանակա-հատվածում երեխայի զարգացման ներուժն իրականացվում է՝ ճանաչելով շրջակա աշխարհը, ձեռք բերելով հասարակական գործունեության սեփական փորձը:

**Հետազոտության թեմայի արդիականությունը**

Արդիականությունը պայմանավորված է կրտսեր դպրոցականի արժեհամա-կարգի ձևավորման կարևորությամբ և այդ գործընթացում մայրենիի դասագրքի նյութերի ուսումնասիրման գործընթացի ընձեռած հնարավորություններով: Հասա-րակական կյանքի տեղաշարժերը մանկավարժներին թելադրում են նոր մոտեցումներ հանդես բերել մայրենիի դասավանդման գործընթացում, դրա միջոցով՝ արժեքային վերաբերմունքի ձևավորման նկատմամբ: Այս առումով կարևորվում և առաջնային նշանակություն է ստանում կրտսեր դպրոցականների համագործակցային, փոխ-ըմբռնման, ինքնուրույնության և արժեկողմնորոշիչ այլ կարողությունների ձևավո-րումը: Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման բովանդակային և գործնական կողմների քննությամբ էլ պայմանավորված է թեմայի արդիականու-թյունը:

**Հետազոտության նպատակը**

Ուսումնասիրության նպատակն է մայրենիի դասագրքերում զետեղված նյութերի ուսումնասիրման ճանապարհով կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորմանը միտված մեթոդական ցուցումների մշակումը:

**Հետազոտության խնդիրները**

ա. սահմանել արժեքները՝ իբրև կրտսեր դպրոցականների գործունեության ու վարքի կողմնորոշիչներ,

բ. ուսումնասիրել և ներկայացնել գրքի դերը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործում,

գ. ուսումնասիրել մայրենիի դասագրքերը՝ որպես կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հիմք,

դ. հետազոտել կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորմանն առնչվող աշխատանքները մայրենիի դասընթացում,

ե. փորձագիտական հարցումներով պարզել մայրենիի դասագրքի դերը երեխայի արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում:

## ԳԼՈՒԽ 1.

# ԱՐԺԵՔՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԱՐՔԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ

### 1.1 Արժեքային համակարգի ձևավորումը տարրական դպրոցում

Երեխայի դաստիարակության առաջնային խնդիրներից է արժեքային համակարգի ձևավորումը, որն անհնարին է հիմնավորել առանց նյութական և հոգևոր արժեքների միջև տարբերության հստակեցման: Մանկավարժների համար առաջնային խնդիր է դառնում նյութական և հոգևոր արժեքների ձևավորման ռազմավարության մշակումը թե՛ դաստիարակության, թե՛ սոցիալականացման մակարդակներում:Արժեքները շրջապատող աշխարհի օբյեկտների հատուկ սոցիալական որոշարկումներ են, որոնք բացահայտում են դրանց դրական և բացասական նշանակությունը մարդկանց համար: Արտաքուստ արժեքը հանդես է գալիս որպես առարկայի և երևույթի հատկություն, որը հատուկ է օբյեկտին ներքին կառուցվածքի շնորհիվ, որքանով օբյեկտը ներքաշված է մարդու հասարակական կեցության մեջ՝ դառնալով սոցիալական հարաբերությունների կրող[1]: Արժեքը դառնում է կրտսեր դպրոցականի դաստիարակության ու դպրոցական հարմարման կարևոր առաջմղիչ գործոն[2]:

Ինչպես ողջ աշխարհում, Հայաստանում ևս ներկայումս արժեքային կրթությունը հասարակությանը մտահոգող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական, արժեքային ժառանգությունը փոխանցել գալիք սերնդին՝ նրանց մեջ լավ և կարևոր արժեքներ սերմանելով: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ այդմ՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի՛ մարդ են ուզում դառնալ և ինչպիսի՛ արժեքներ կրել: Նշված երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն ձևական բնույթ է կրում, երբ լսում են լավ

---

[1] Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 41-42:

[2]Ценности как основа социализации и воспитания, https://studme.org/1469111324110/pedagogika/tsennosti_kak_osnova_sotsializatsii_vospitaniya.

արժեքների՝ ազնվության, արդարության և այլնի մասին, բայց հասարակական միջավայրում հաճախ ականատես լինում արժեքների խախտմանը: Մյուս կողմից էլ նոր մոտեցումը ազատական է, և կարող է վտանգ լինել, որ ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը տրվի առաջինին: Ուստի պետք է կարևորել այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:

Գոյություն ունեն արժեքների տարբեր դասակարգումներ: Արժեքների դասակարգման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն հոգևոր, այլև նյութական արժեքների ճիշտ գնահատման, ճանաչման հիմնախնդիրը:

Ուսումնական գործընթացը ձևավորում է ոչ միայն արժեքային կողմնորոշումներ, այլև արժեքային-գնահատողական վերաբերմունք բոլորի, այդ թվում՝ ընտանիքի անդամների նկատմամբ[3]:

Երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Մանկավարժական գործընթացը բնութագրվում է որպես մանկավարժի ու աշակերտի, անհատի և սոցիումի գործունեություն, որի ընթացքում երեխայի մեջ տեղի է ունենում դրական փոփոխություն:

Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը դիտարկվում է արժեքների ընկալման, արժեքային կողմնորոշումների կայունացման գործընթացում, որն արտահայտվում է ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության կազմակերպման միջոցով: Նշված գործընթացը դիտարկվում է որպես անձի կողմից այս կամ այն արժեքի յուրացում: Ըստ Մ. Ռոկիչի՝ արժեքը բնորոշվում է որպես անձի համոզմունք, որը վարքի դրսևորման որոշակի միջոց է կամ կեցության վերջնական նպատակ և նախընտրելի է անձնական կամ սոցիալական տեսանկյունից[4]:

Ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը տեղի է ունենում մանկավարժության ներգործության միջոցներով, որոնք իրականացվում են մանկավարժական նպատակաուղղված գործընթացում աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Նմանօրինակ ներգործությունը իրականանում է դիդակտիկական նպատակահարմարության սկզբունքով: Այլ բնորոշ-

[3] Воспитание у младших школьников ценностного отношения к семье в условиях общеобразовательной школы, https://mir-nauki.com/PDF/67PDMN418.pdf.
[4] Rokeack M., The nature of human values, New York, 1973,p. 10-11.

մամբ արժեհամակարգի ձևավորումը սովորողի կողմից արժեքների յուրացման գործընթացն է, որը իրականանում է մանկավարժական նպատակաուղղված և հետևողական ներգործության արդյունքում ու հարստացնում է երեխայի հոգևոր աշխարհը՝ նպաստելով անձի համակողմանի զարգացմանը: Արժեհամակարգի ձևավորումը տևական գործընթաց է և իրականանում է աստիճանաբար ուսումնական և արտաուսումնական, մասնավորապես ուսումնական առարկաների յուրացման գործընթացում:

Կրտսեր դպրոցական տարիքը բնորոշվում է համակարգային մի շարք փոփոխություններով: Այս տարիքում են ձևավորվում վարքի և գործունեության նոր մեխանիզմներ, դրդապատճառներ, պահանջմունքներ և բազմաթիվ հետաքրքրություններ, որոնք հիմք են ստեղծում արժեքների և նորմերի յուրացման համար: Այս տարիքը նաև ճանաչողության գործունեության ակտիվացման փուլ է, որի ընթացքում ձևավորվում է գնահատողական և վերլուծական վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ: Այս տարիքում մտածողությունը թռիչքային զարգացում է ապրում. այն այլևս միայն պատկերացումներով չի իրականանում, համակարգային բնույթ է ստանում, «շրջելիություն» է ձեռք բերում, այսինքն՝ հնարավորություն է ստեղծվում փոխել մտքի ուղղությունը, ասենք՝ վերադառնալ խնդրի նախնական պայմաններին: Էապես նվազում է եսակենտրոնությունը. երեխան կարողանում է այլ օբյեկտների, մարդկանց դիրքերից ընկալել իրավիճակը[5]:

Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունը ընդօրինակումն է: Նրանք շատ են սիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը: Նրանց ընդօրինակման առաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: Ցավոք, երեխաները ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափահասները պետք է խուսափեն բացասական վարքի ձևերից: Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավվելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների և ուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում են բացասական հուզական վիճակներ, հոգե-

[5]Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1974, էջ 27:

կան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, կամային վճռականությունը և պարտքի զգացումը:

Եթե նախորդ տարիքային փուլերում գործունեության հիմնական տեսակը խաղն էր, ապա այժմ առաջնային է դառնում նպատակաուղղված ուսումնական գործունեությունը, որի ընթացքում երեխան ստանում և մշակում է մեծաքանակ տեղեկություն: Այնուհետև էական փոփոխություններ են կատարվում երեխայի հոգեկան ոլորտում: Կրտսեր դպրոցականը, ունենալով ֆիզիոլոգիական փոփոխություններ, առանձնանում է նաև իմացական ոլորտի փոփոխություններով. զարգանում են նրա ընկալումը, հիշողությունը:

Կրտսեր դպրոցականը ստանձնում է նոր՝ աշակերտի դեր. նրա վարքում և գործողություններում ի հայտ են գալիս փոփոխություններ: Կրտսեր դպրոցականը գիտակցում է իր եսը, փորձում է ինքնահաստատվել, արտահայտել իր վերաբերմունքը դրականի և բացասականի նկատմամբ, գիտակցել իր և ուրիշների արժեքային արարքները: Եթե 1-2-րդ դասարաններում աշակերտները ուղղորդվում են ուսուցիչների ցուցումներով, ապա 3-րդ դասարանում նրանց վարքում ի հայտ են գալիս ինքնակարգավորման, սեփական արարքները վերլուծելու, գնահատելու և արժևորելու կարողություններ: Երեխայի մեջ ձևավորվում են պահանջմունքներ, դրդապատճառներ, արժեքային կողմնորոշումներ: Միևնույն ժամանակ պետք է ասել, որ երեխայի մտածողությունն այս տարիքում դեռ սահմանափակ է, այն դեռևս խիստ կոնկրետ է, երեխան հաճախ ի վիճակի չի լինում վերացարկվել կոնկրետ իրադրություններից, իրականացնել տրամաբանական մտահանգումներ:

Ուսումնական գործունեությունը, ի տարբերություն խաղի, «բնությունից» տրված չէ երեխային, ուսուցիչները և ծնողներն են, որոնք սովորեցնում են երեխային սովորել, և շատ կարևոր է, որ նրանք քաջ գիտակցեն այս հանգամանքը, կարողանան ուղղել երեխայի ճանաչողական պահանջմունքը դեպի ուսումնական առարկաները, սովորեցնեն երեխաներին ուսումնական խնդիրներ առաջադրել և լուծել: Այս գործում ահռելի դեր է խաղում խրախուսանքը. պետք է խրախուսել երեխայի ցանկացած հաջողություն, իսկ անհաջողությունների դեպքում՝ ոչ թե վիրավորել երեխային, ներ-

շնչել, որ նա հիմար է, այլ բացատրել, որ սխալներն անխուսափելի են և ժամանակի ընթացքում անպայման կվերանան[6]:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացողություններն առաջանում են ոչ միայն հաճելի խաղալիս և հաճույք ստանալիս, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելիս, դժվարություններ հաղթահարելիս, նաև մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում. վատն ու լավը փոխարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն:

«Կրտսեր դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար»[7]:

Ուրեմն սովորողների սոցիալականացման գործընթացն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև արտադասարանական աշխատանքների գործընթացում, քանի որ արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության և զարգացման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում երեխայի սոցիալականացման գործընթացը: Արտադասարանական աշխատանքի բազմապիսի տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչնե-

[6]Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, 2004, էջ 34:
[7] Տե՛ս Հանրակրթության պետական կրթակարգ և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004, 41, էջ 9:

ին ապահովելու դաստիարակության ու ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը: Արտադասարանական ընթերցանությունը պայմաններ է ստեղծում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, գեղարվեստական, տեխնիկական և այլ կազմակերպման համար, որի ընթացքում կարող են զարգանալ երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլև նրանց հակումները, ընդունակությունները:

Մայրենիի դասավանդման գործընթացը տարրական դպրոցում ներառում է երեք ոլորտ.

1. լեզվական գործունեություն՝ բանավոր և գրավոր խոսք, ընթերցանություն, ունկնդրում և այլն,
2. գրական ստեղծագործությունների ուսուցում,
3. մայրենի լեզվի համակարգը:

Երեխայի արժեհամակարգը ձևավորվում է նշված երեք ուղղություններով՝ այդ ոլորտներից յուրաքանչյուրի յուրացմամբ: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումն իրականացվում է խոսքային գործունեության, գրական տեքստերի շուրջ աշխատանքների և տվյալ լեզվի համակարգի, գիտելիքների յուրացման, հմտությունների և կարողությունների ձևավորման և զարգացման գործընթացում:

Մեծ է մայրենի լեզվի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում: Լեզուն՝ որպես խոսքային հաղորդակցման միջոց, սովորողներին առնչակից է դարձնում մշակութային ժառանգությանը, հանդես է գալիս որպես շրջապատող աշխարհի ընկալման միջոց: Այս ամենը մի կողմից բարձրացնում է մայրենի լեզվի ուսուցման դերը, մյուս կողմից մանկավարժներին օգնում կիրառել մանկավարժական ներգործության բազմաթիվ միջոցներ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ: Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը ուսումնական գործընթացի սուբյեկտների ակտիվ փոխներգործության գործընթաց է, որի արդյունքը համամարդկային արժեքների յուրացումն է, գնահատողական վերաբերմունքի և արժեքային կողմնորոշումների ձևավորումը:

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխներգործության արդյունքն է, որի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցչի գործունեությամբ:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման բովանդակությունը բնութագրվում է կրթական ընդհանուր խնդիրների լուծմամբ: Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները հնարավորություն չեն ընձեռում ուսումնական գործընթացում ներառելու բոլոր արժեքները: Կարևորվում են հասկացողությանը մատչելի և նրանց կենսափորձից բխող արժեքները: Արժեհամակարգի ձևավորման գործընթացը արտացոլվում է կրտսեր դպրոցականի գործունեության տարբեր ոլորտներում՝ ներառելով ձեռք բերած գիտելիքները, կարողությունները, հմտությունները և աշխարհի նկատմամբ գնահատողական, հուզական վերաբերմունքը:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

- գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում, գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը խթանում է նրանց իմցական ու սոցիալական արժեքների ձևավորումը, իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի, տարբեր բնագրերի ուսուցման և ուսումնասիրման ընթացքում[8]: Մայրենի լեզվի դասը ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ: Կրտսեր դպրոցականների պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պետք է համարժեք լինի քերականական առաջադրանքների

[8]Люблинская А.А., Детская психология. - М., 1971, с. 399, Божович, Л.И. Личность и ее формирование в детском возрасте, СПб., 2008, 193.

կատարմանը: Ընդհանուր առմամբ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը նպատակ ունի ձևավորելու անձ և քաղաքացի, որը պետք է.

- ✓ գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- ✓ լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության կարևորությունը,
- ✓ գիտակցի, որ կրթությունը, գիտելիքները արժեք են,
- ✓ կարևորի բարոյական, քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, մեծահոգի, արդարամիտ, օրինապահ,
- ✓ գնահատի գեղագիտական արժեքները՝ գեղեցիկը, բարին և ճշմարիտը,
- ✓ գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք,
- ✓ հարգի դիմացինի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի այլ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,
- ✓ արդարացիորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- ✓ դրսևորի աշխատասիրություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և ուրիշների աշխատանքը,
- ✓ հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում և այլն:

Այսպիսով՝ տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման ժամանակ սովորողների կողմից յուրացվում են արժեքներ ուսումնական նյութի բովանդակության մեջ՝ նպաստելով նրանց արժեհամակարգի ձևավորմանը: Տարրական դասարաններում, բացի կրտսեր դպրոցականների իմացական ոլորտի, խոսքի, ստեղծագործական կարողությունների զարգացումից, գեղագիտական ճաշակի ձևավորումից, իրականացվում է նաև աշակերտների հաղորդակցում ազգային և համամարդկային արժեքներին, որն էլ ձևավորում է նրանց արժեհամակարգը՝ իմացական, սոցիալական, բարոյական, գեղագիտական բաղադրիչներով:

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումն իրականանում է ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում՝ ըստ ուսումնական ծրագրերով նախատեսված թեմատիկ նյութերի, ընթերցանության համար նախատեսված գրականության, վարժությունների և առաջադրանքների: Այդ նյութերում արժեքներն արտացոլված են ուղղակի, անուղղակի, միջնորդավորված ձևով և այլաբանորեն: Դրանից բխում է, որ կրտսեր դպրոցականի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում մեծ է ուսուցչի դաստիարակչական ներգործությունը:

## 1.2 Մանկական ստեղծագործությունների դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում

Գաղտնիք չէ, որ կրտսեր դպրոցականների սոցիալականացման, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանը, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը մեծապես նպաստում են մանկական ստեղծագործությունները: Գիտելիքներն ու գրքերն անհրաժեշտ են՝ անձի զարգացման մանկավարժական գործընթացն իրականացնելու համար[9]: Ճանաչողական և արժեքային ունակությունները զարգացնելու առումով գրքերը մեծ դեր են խաղում կրտսեր դպրոցականի սոցիալականացման գործընթացի և արժեքային համակարգի ձևավորման վրա, որի արդյունավետությունը կախված է՝

- ուսուցչի մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածությունից ու լավատեսությունից,
- աշակերտների նկատմամբ նրա վստահելի վերաբերմունքից,
- դասարանի կոլեկտիվի գործունեության տարբեր ձևերի զուգակցումից ու կազմակերպումից,
- դպրոցականների աշխատանքի օբյեկտիվ խրախուսումից ու գնահատումից,
- նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու մշտական պատրաստությունից և այլ հանգամանքներից:

Մանկական ստեղծագործությունները կարևոր դեր են կատարում կրտսեր դպրոցականի անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում: Դրանց միջոցով իրականացվող բառային աշխատանքը, ընթերցանությունը, բնագրերի վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ են դառնում: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին: Երեխաների մեջ ձևավորվում են հաղորդակցական տարրական կարողություններ, մայրենի լեզվի նկատմամբ սեր,

[9] Сластенин В.А. и др. Педагогика: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / В. А. Сластенин, И. Ф. Исаев, Е. Н. Шиянов; Под ред. В.А. Сластенина. - М.: Издательский центр "Академия", 2002, http://krotov.info/lib_sec/shso/71_slas2.html, http://www.ncela.gwu.edu/files/rcd/BE000443/Culture.pdf.

հետաքրքրություն, նրա անաղարտության նկատմամբ հոգածություն, կատարելագործվում և զարգանում են լեզվահաղորդակցական և մտահաղորդակցական ունակությունները:

Ուսումնական նյութերը, մանկական երկերը երեխաներին օգնում են հեշտորեն անցնել սոցիալականացման գործընթացը՝ հարմարումը դպրոցական կյանքի պայմաններին, նոր հարաբերություններին, պահանջներին, ուսումնական գիտելիքների և հմտությունների յուրացմանը, ակտիվ ճանաչողական գործունեությանը: Հարմարման ընթացքում ձևավորվում են կրտսեր դպրոցականի հարաբերությունները աշխարհի և սեփական անձի նկատմամբ, հասակակիցների և մեծահասակների հետ փոխհարաբերությունների կայուն ձևերը և հիմնարար դիրքորոշումները, որոնք բնորոշում են երեխայի ուսուցման հաջողությունը, արդյունավետ հաղորդակցումը, դպրոցական միջավայրում ինքնահաստատվելու հնարավորությունը[10]:

Մանկական երկերի միջոցով ուսումնական գործընթացում զարգանում են կրտսեր դպրոցականի արժեկողմնորոշիչ, հուզակամային ոլորտի առանձնահատկությունները: Ձևավորվում են պահանջմունքներ, պատրաստականություն և այլն: Մանկական գրքի ընթերցումն ու գրքի հետ աշխատանքը ձևավորում են իմացական-ճանաչողական, սոցիալական արժեքներ, որոնց հիման վրա զարգանում են կրտսեր դպրոցականի մտքի ճկունությունը, եզրահանգելու, վերլուծելու, հիմնավորելու, գնահատելու, արժևորելու, կարևորը երկրորդականից զանազանելու, պատճառահետևանքային կապերը գիտակցելու կարողությունը:

Մանկական գրքերն ունեն արժեքային ներուժ, քանի որ ոչ միայն ճանաչողական տեղեկություններ են տալիս, նաև նպաստում են երեխայի հուզական աշխարհի զարգացմանը. դաստիարակում են բազմակողմանի հետաքրքրություններ, զարգացնում են աշակերտի միտքը, օգնում տարբերել չարն ու բարին, դրականն ու բացասականը: Գրքերում զետեղված բնանկարները, գեղարվեստական պատկերները, բնագրերը երեխայի մեջ ձևավորում են ճնաչողական, գեղագիտական, բարոյական արժեքներն ընկալելու և գնահատելու կարողություններ: Գրքերի տեքստերի բովանդակության մեջ և գեղարվեստական կերպարների կառուցման համակարգում արտա-

[10]Մ.Միքայելյան, Է.Զաքարյան, Դպրոցական հարմարման հոգեբանական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում, «Հոգեբանությունը և կյանքը», Գիտահանր. հանդես, Երևան, 2013 (1-2), էջ 34-35:

ցոլված արժեքները նպաստում են նաև երեխայի ընտրություն կատարելու կարողության ձևավորմանը:

Դասագրքերում ընդգրկված նյութերում արտացոլված արժեքների բացահայտման ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում է տեքստերի ու առաջադրանքների արժեքային ուղղվածությանը: Դրանցում առկա արժեքների յուրացումը հնարավոր է դասագրքի և լրացուցիչ ձեռնարկների նյութերի շուրջ համակողմանի աշխատանքում, որի ընթացքում ձևավորվում են երեխաների ճանաչողական հետաքրքրությունները, տրամաբանական մտածողության ձևերն ու եղանակները և բազմաթիվ այլ հմտություններ ու կարողություններ:

Մանկական գրքերին և դասագրքերին բնորոշ են արժեքների արտացոլման ուղղակի և անուղղակի միջոցները: Արժեքների անուղղակի արտացոլումն արտահայտվում է գրքերում զետեղված գիտաճանաչողական բնույթի տեքստերում, սակայն սովորողի վրա հուզական-արժեքային ներգործությունը տեղի է ունենում առավելապես այնպիսի փաստերի միջոցով, որոնք հետաքրքրություն են առաջացնում տեքստերի բովանդակության նկատմամբ:

Մայրենիի դասագրքերում, ընթերցարաններում տարբեր տեսակի նյութեր են կիրառված, որոնք ճանաչողական ու դաստիարակչական այլևայլ խնդիրներ ունեն, և ըստ այդմ՝ դրանք պիտի ուսումնասիրվեն դասերի ընթացքում: Ուսուցիչը եթե ցանկանում է՝ իր պարապած լեզվի դասը լիարժեք և նպատակային լինի, կամա թե ակամա պիտի դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա թե՛ բովանդակության և թե՛ լեզվի տեսանկյունից: Այդ տարբեր գիտությունների ցանկը կարող է շատ ընդարձակ և համառոտ լինել, դրանից վերցված փաստերն ու տեղեկությունները սխեմատիկ և ծավալուն լինեն. այդ ամենը կախված է ուսուցչից, նրա գիտելիքների պաշարից, նրա մանկավարժական-մեթոդական վարպետությունից: Երբեմն նույն նյութի շուրջ մեկ ուսուցիչ կարող է շատ բան տալ աշակերտներին, հարստացնել նրանց մտավոր և լեզվական պաշարը, իսկ մեկ ուրիշը, ընդհակառակը, շատ քիչ բան տալ, որովհետև նա կարող է տալ միայն այն և այնքանով, ինչքան որ նա ունի, կամ որքանով որ կարողանում է նա իր ունեցածը աշակերտներին հասցնել: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ մայրենի լեզվի դասագիրքը տարրական

դասարաններում ներառում է կամ ընդհանրացնում, իրենով ներկայացնում աշխարհաճանաչողական գիտելիքների ամբողջ համակարգը, և ուսուցիչը այդ հանգամանքը պետք է նկատի ունենա և իրականացնի իր աշխատանքի ընթացքում՝ կիրառելով բոլոր այն աշխարհաճանաչողական գիտելիքների իր իմացած տվյալները, որոնք անհրաժեշտ կլինեն նյութերի ուսումնասիրման ընթացքում: Այս դեպքում կրթության բովանդակությունն ստանում է հուզական-արժեքային բաղադրատարր, որի հիման վրա էլ իրականանում է աշակերտի ճանաչողական գործունեությունը[11]:

Այսպիսով՝ տարրական դասարաններում դրվում են բոլոր գիտելիքների և կարողությունների հիմքերը, երեխաներն աստիճանաբար հաղորդակից են դառնում մարդկության ստեղծած արժեքներին, բնության գաղտնիքներին, հարստանում է նրանց խոսքն ու մտածողությունը, և նրանք զարգանում են: Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար նրանց ոչ միայն պիտի գրելու, կարդալու և խոսելու հմտություններ սովորեցնել, այլև չմնալ զուտ դասագրքերի ուսումնական նյութերի շրջանակում, տալ բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ, սովորեցնել շրջապատում գնահատել լավն ու գեղեցիկը, լավն ու բարին՝ անընդհատ հարստացնել աշակերտի ստացած գիտելիքները, համալրել դրանք, շրջանառության մեջ պահել սովորածը, շաղկապել դրանք այնպես, որ գիտելիքները կապվեն միմյանց հետ: Գիտելիքների միավորման և համադրման գործընթացը լայն հեռանկար է բացում ոչ միայն մանկավարժական գործընթացի, այլ դրա իրականացման ձևերի և մեթոդների կատարելագործման և առհասարակ սովորողի անձի ձևավորման ու զարգացման համար: Մայրենիի և ուսումնական այլ առարկաների դասագրքերի միջոցով իրականանում է կրտսեր դպրոցականի զարգացումն ու արժեհամակարգի ձևավորման գործընթացը: Սովորաբար արժեքային ուղղվածությունն առկա է ընթերցանության համար նախատեսված նյութերում, հատկապես գեղարվեստական բնագրերում, որոնցում առկա է արժեքների հուզական կողմը դրանց գեղագիտական, բարոյական արժևորումն ու գործնական կիրառումը: Աշակերտները գրքերից ստանում են արժեկողմնորոշիչ հմտություններ, որոնք մարմնավորում են իրենց գործողություններում, արարքներում և վարքում:

[11] https://www.dissercat.com/content/pedagogicheskie-usloviya-priobshcheniya-mladshikh-shkolnikov-k-dukhovnym-tsennostyam-v-prots

## ԳԼՈՒԽ 2.

## ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

### 2.1 Մայրենիի դասագրքերն իբրև արժեհամակարգի ձևավորման հիմք

Տարրական դպրոցի դերն այսօր փոխվում է. նախնական գիտելիքներ փոխանցող կրթական հաստատությունից այն դառնում է հիմնարար աստիճան, որը տալիս է շրջակա աշխարհը ճանաչելու ընդհանուր կարողություններ, բացահայտում և զարգացնում է երեխայի ընդունակությունները, ձևավորում է նրա արժեհամակարգը, մոտիվացնում նրա ինքնակրթական գործունեությունը:

Դպրոցահասակ երեխան առավել ընկալունակ է զգայական-արժեքային, հոգևոր-բարոյական դաստիարակության նկատմամբ: Ընդ որում՝ տարրական դպրոցի դաստիարակության թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ դաստիարակության բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման՝ օնտոգենեզի բացասական հետևանքների: Դրա համար ժամանակակից տարրական դպրոցում սկսել են առանձնակի ուշադրություն դարձնել հատկապես դաստիարակության խնդիրներին, արժեհամակարգի ձևավորմանը[12]:

Մայրենիի դասագրքերը առանցքային նշանակություն ունեն երեխաների արժեհամակարգի ձևավորման գործում: Մայրենիի դասագրքերի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել, այլև տեղեկություններ են ձեռք բերում Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորույթների, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական գիտելիքներ («Աշուն», «Տերևաթափ», «Ինչո՞ւ է նոյեմբերը գույնզգույն», «Ամիսներ և չորս եղանակ», «Երևան», «Սուրբ Էջմիածին», «Լավաշ» և այլն)[13], որոնք զարգացնում են նրանց գեղագիտական ճաշակը, մտածողությունը, մասնավորապես խոսքը: Մանկական այն ստեղագործությունները, որոնք ուսումնասիրվում են մայրենիի դասերին, այնպես պետք է ուսուցանել, որ դրանք երեխաներին ոչ միայն մայրենի լեզվով կարդալ և պատմել սովորեցնեն, այլև զարգացնեն նրանց բանավոր խոսքը

[12] Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019, с. 25, Гаврилычева Г Ф. Младший школьник и его ценности // Начальная школа, 2008, №7, с. 13-17.

[13] Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, Երևան, 2010, էջ 24-27, 126-130:

ստեղծագործությունները հասկանալու, դրանք վերլուծելու, նրա ենթաշերտերի մեջ թափանցելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, համապատասխան դատողություններ անելու միջոցով:

Ուսուցչի խնդիրն է աշակերտներին ոչ թե գիտական սահմանումներ սովորեցնել, այլ նրանց մեջ գեղարվեստական զգացողություններ մշակել, համապատասխան քննարկումների միջոցով զարգացնել նրանց խոսքն ու մտածողությունը[14]:

Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման գործում կարևոր դեր ունեն մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունները, որոնց գաղափարի բացահայտումը նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ի՛նչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի՛ մասին է խոսքը լինելու, և ո՛րն է նշված ստեղծագործության հիմնական գաղափարը: Ընթերցանության ընթացքում, երբ աշակերտը կարդում է, նա իր վրա է վերցնում կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու, իր խոսքը ցուցադրելու առաջատար դերը:

Որպես մանկական հայրենասիրական ստեղծագործություններ մայրենի լեզվի ընթերցարաններում կարող են հանդես գալ պատմվածքը, մանկական բանաստեղծությունները, առակները և այլն:

<<Մայրենի 3-րդ>> դասագրքում զետեղված <<Ամենից լավ տունը>> և նման այլ ստեղծագործությունների շնորհիվ և ուսուցչի ճիշտ հարցադրումների միջոցով կարելի է աշակերտի մոտ ձևավորել հայրենասիրական որակներ:

Հայրենասիրական թեմաներով ստեղծագործությունները կարևոր տեղ ունեն տարրական դասարանների մայրենիի դասագրքերում, քանի որ ունեն դաստիարակչական մեծ արժեք, ձևավորում են երեխաների աշխարհայացքը, արժեհամակարգը, միևնույն ժամանակ կապակցված խոսքի բոլոր կողմերի զարգացման արդյունավետ միջոց են: Դրանք մնայուն նշանակություն ունեցող գործեր են, որոնք երեխաների մոտ կարող են ձևավորել առարկաների և երևույթների հասարակական-մշակութային էությունը, որը նորմատիվային նշանակություն է ձեռք բերում՝ ձևավորելով սոցիալական վարքի նորմ[15]:

---

[14] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 152:
[15] Նալչաջյան Ա., Հոգեբանական բառարան, Երևան, 1984, էջ 25:

Հետո անցում է կատարվում պատմելուն նախապատրաստող հարցերին: Հարցերը պետք է կառուցել այնպես, որ դրանք ոչ միայն նպաստեն ստեղծագործության կամ նյութի մանրամասն վերարտադրմանը, այլև գլխավոր միտքը որոշելուն, գործող անձերի վարքը վերլուծելուն, դեպքերի պատճառահետևանքային կապերը ճշգրտելուն և որոշակի արժեքների զարգացմանը:

Այսպիսով՝ մայրենիի դասագրքերում ընդգրկված ստեղծագործությունների ուսուցման ժամանակ սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու, ինչպես նաև ինքնարտահայտվելու կարողությունն է:

Կախված ուսումնասիրվող թեմայից՝ գրքերում զետեղված են բազմատեսակ առաջադրանքներ, որոնք ուսուցչին և աշակերտներին զրույցներ ծավալելու հնարավորություն են տալիս:

Կրտսեր դպրոցականը ոչ միայն պետք է կարողանա ըմբռնել զրույցի միջոցով ստացած գիտելիքները, այլև իմաստավորված ձևով կիրառել դրանք որոշակի գործողությունների միջոցով: Մայրենիի դասագրքերում հանդիպում են բազմաթիվ թեմաներ, որոնց շուրջ կարող են ծավալվել զրույցներ, որոնք էլ իրենց հերթին ունեն ուսուցողական բնույթ և դաստիարակում են որոշակի արժեքներ: Օրինակ՝ «Մայրենի 2» դասագրքում հանդիպում է այսպիսի առաջադրանք: Տրված է նկար, և աշակերտը պետք է հորինի պատմություն տրված նկարների շուրջ: Այդ նկարների օգնությամբ ուսուցչուհին կարող է շեշտը դնել որոշակի արժեքների վրա և խոսակցությունը շարունակել տվյալ ենթատեքստում: Էջ 144-ում ունենք նկար որտեղ պատկերված են հավն ու իր ճուտիկները: Մենք կարող ենք հարցադրումներ անել քույր-եղբայր, ծնող-երեխա հարաբերությունների մասին և վեր հանել որոշակի արժեքներ:

Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության բարոյահոգեբանական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել առարկայի նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական

խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը[16]:

Այսպիսով՝ մայրենիի ժամերին սովորողների արժեհամակարգի ձևավորման խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ, վերլուծում են նկարներ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ.

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Վերարտադրելով բնագրերին ուղեկցող նկարները կամ կատարելով նկարագարդ առաջադրանքները՝ երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի, բարու և չարի, սիրո և ատելության, մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես կնպաստի գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցանությունը, իսկ ուսուցիչը ուղղորդողի դեր կկատարի այդ գործընթացում:

Ելնելով մայրենի լեզվի ուսուցման չափորոշիչներից՝ կարելի է նշել, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը արտացոլում է այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են տարրական դասարաններում ուսուցման գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով կրտսեր դպրոցականի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ

[16] Вентцель К.Н. Нравственное воспитание и свобода. // Этика и педагогика творческой личности: В 2 т. М., 1912. Т.2, с. 570-571, Болдырев Н.И., Нравственное воспитание: вопросы теории. М.: Просвещение, 1978, с. 171.

առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և վարքային բաղադրատարրերը[17]:

Ըստ Ս. Ի. Մասլովի կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացումն իրականանում է երեք աստիճաններով.

1. առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ. սկզբում երեխան ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն՝ իր հուզական-զգայական ոլորտի մակարդակի համեմատ,

2. երկրորդ աստիճանը կապված է ընկալվող օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ,

3. երրորդ աստիճանում իրականանում է կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումների մեջ արժեքի ներմուծման, այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների կողմից արժեքների հուզական ընկալումն իրականանում է՝ ըստ դրանց նշանակության գիտակցման և անձի վարքային դրսևորումների[18]:

Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդի կիրառումը սովորողներին մղում է արժեքների յուրացման երրորդ աստիճանին: Այս մեթոդի էությունն այն է, որ հակադիր արժեքների ցուցադրմամբ սովորողների մեջ համապատասխան հակադիր զգացումներ ձևավորվեն: Դրա շնորհիվ երեխաների մեջ արթնանում են հույզերի, զգացմունքների և դրական արժեքների գիտակցման համոզմունքներ, ապրումներ, որոնք և ձևավորում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգը: Կրտսեր դպրոցականների կողմից արժեքային կողմնորոշումների յուրացման այսօրինակ մոտեցումը նպաստում է արժեքային ընտրության առավել գիտակցված և ինքնուրույն իրականացմանը:

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգը միանգամից չի ձևավորվում: Մայրենիի դասագրքում առկա յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրումը նպաստում է արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ու զարգացմանը: Լեզվի ուսուցումը միակող-

[17] Непомнящая Н.И., Психодиагностика личности: Теория и практика: Учеб. пособие для студ. высш. учеб. Заведений, М., 2001, с. 73-74.

[18] Маслов С.И., Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов, Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999, с. 154-155.

մանի գործընթաց չէ. այն հնարավորություն է տալիս կուտակված արժեքներն ու կողմնորոշումները փոխանցելու գալիք սերունդներին[19]

Յուրաքանչյուր թեմայի շրջանակում պետք է հատվածաբար աշակերտներին պատմել տալ դասագրքում առկա տեքստերը, առավել ևս նրանց հարցեր տալ, ինչպես նաև օգնող բացատրություններ: Որքան էլ որ տեքստերը պատմելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և աշակերտների խոսքը հարստանա դրանցով: Ընթերցած նյութի պատմելը կամ վերարտադրելը առարկաների կատարած գործողությունների, ընթերցած ստեղծագործության գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականությամբ հաղորդումն է: Ստեղծագործությունների ընթերցումը, վերարտադրումը, վերլուծումը հանդես են գալիս որպես խոսքի զարգացման կարևոր բաղադրիչ.

- Ստեղծագործությունը պատմողին պիտի հուշի՝ ո՞ւմ կամ ինչի՞ մասին պիտի պատմի և ներկայացնի, թե ի՞նչ է տեղի ունենում (ունեցել):
- Նկարի վերարտադրության ժամանակ հենակետային բառերն ընտրելու կարողության ձևավորման ժամանակ ուսուցիչը պիտի նկատի ունենա, որ պատմումը պահանջում է սահմանական եղանակի շարժման բայեր, որոնք ցույց են տալիս գործողության արդյունք:
- Պատմելու ժամանակ կիրառվում են մի անգամ, օրերից մի օր, այդ ժամանակ, հանկարծ, անսպասելի, այդ օրերին, դրա հետևից, հենց որ և նման այլ բառեր և արտահայտություններ:

Բոլոր տեսակի քայլերի դեպքում, որոնք ընկած են աշակերտների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմքում, պետք է հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդայնության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները[20]:

Մայրենիի դասավանդման գործընթացում աշակերտների արժեհամակարգի ձևավորմանը նպաստում են միջառարկայական և ներառարկայական կապերը: Մայ-

[19] Романовская З. И., Чтение и развитие младших школьников, М., 1992, с. 28-35.
[20] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 42:

րենիի դասերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր, միմյանց չկրկնող և չբացառող ձևեր կամ եղանակներ կան: Այդ ձևերից առաջինը ուսումնական գործընթացում ներառարկայական կապերի ճիշտ կիրառումն է: Այն, ինչ աշակերտներն անցել են նախորդ դասին կամ դասերին, հետևողականորեն պիտի կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ: Սա ուսուցման գործընթացի գիտական կազմակերպման նոր պահանջ է և հետևողականորեն պետք է պահպանվի մայրենի լեզվի բոլոր դասերի ընթացքում: Աշակերտներն առաջին օգնությունը կարող են և պիտի ստանան դաընթացից վերցրած այն գիտելիքներից, փորձից ու լեզվական ընդհանուր պաշարից, որը նրանք կուտակել են տարիների ընթացքում, և որը պետք է գործողության մեջ դնել, վերհիշել, կապել նորի հետ, լրացնել ու ամբողջացնել նախկինում ձեռք բերածը:

Միջառարկայական կապերի կիրառման մյուս եղանակը, որի գործածումը ևս կարևոր է մայրենի լեզվի դասերին, ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է: Սա նույնպես աշակերտի ունեցածի, ձեռք բերածի և կուտակածի նպատակահարմար և արդյունավետ օգտագործման պահանջն է՝ գիտելիքների և կարողությունների գիտելիքների և կարողությունների բնագավառում: Այնպես, ինչպես ամեն դասարանում աշակերտին գրել-կարդալ չենք սովորեցնում, որովհետև առաջին դասարանում է սովորել է, այդ կարողություններն ունի, և դրանք վստահորեն պետք է օգտագործել ուսուցման գործընթացում, այնպես էլ բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք ձեռք է բերել առաջ, հմտորեն պետք է կիրառել ուսուցման գործընթացում ընդհանրապես և մայրենի լեզվի դասերին մասնավորապես: Գիտելիքների և կարողությունների այսպիսի փոխանցումը և օգտագործումը պետք է դիտել որպես միջառարկայական կապերի կիրառության կարևոր ձևերից մեկը և վստահորեն կիրառել տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին՝ հավատացած լինելով, որ այն մեծ օգուտ կարող է տալ ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական և արժեհամակարգի ձևավորման առումներով:

## 2.2 ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի դժվարացել է երեխային ստիպել գիրք կարդալ, այնուհանդերձ, գրքի դերը նրա արժեհամակարգի ձևավորման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Առաջին՝ <<Ի՞նչ կամ ո՞ւմ ես սիրում ամենից շատ>> հարցին աշակերտների գերակշիռ մասը՝ 76%-ը, նշել է, որ սիրում է ծնողներին և ընտանիքը, 10%-ը նախընտրում է դպրոցը, 9%-ը սիրում է խաղալ, 5%-ը՝ նկարել: Պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ երեխաների համար հիմնական արժեք են ընտանիքը, ծնողը, դպրոցը:






<<Ի՞նչն է քեզ համար ամենակարևորը>> հարցի միջոցով փորձեցինք պարզել, թե առաջարկված տարբերակներից աշակերտների համար ի՛նչն է ամենակարևորը: Պատասխաններից պարզվեց, որ աշակերտների համար ամենակարևորը դարձյալ ընտանիքն է, այնուհետև դպրոցը, առողջությունը, ընկերները: Ինչպես առաջին այնպես էլ երկրորդ հարցում երեխայի կյանքում կարևոր դեր ունի ընտանիքը:

Հաջորդ՝ <<Ամենից շատ ի՞նչ ես սիրում անել>> հարցի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ աշակերտների զգալի մասը՝ 75%-ը, սիրում է սովորել, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է ուսուցչի մանկավարժական հետաքրքիր գործունեությամբ, արդյունավետ մեթոդների կիրառմամբ: Աշակերտների 16%-ը սիրում է օգտակար գործ կատարել՝ օգնել ծնողներին, տատիկին ու պապիկին, ընկերներին, 3%-ը՝ խաղալ, նկարել, հեծանիվ վարել: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ աշակերտների համար գիտելիքը կարևոր արժեք է:




<<Ինչո՞վ կզբաղվեիր, եթե քեզ ամեն ինչ թույլ տրվեր>> բաց հարցին ի պատասխան՝ աշակերտների մեծամասնությունը նշել էր, որ ազատ ժամանակը կանցկացներ՝ խաղեր խաղալով: Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ այս պատասխանը անսպասելի չէր, քանի որ երեխաները օրվա մեծ մասը զբաղված են դասապատրաստումով: Խաղից բացի, կային նաև այլ տարբերակներ՝ հեռուստացույց դիտել, դաս անել, մեքենա վարել, ճանապարհորդել, ծնողներին օգնել, բարեգործություն անել, նկարել:

Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ուսումնասիրմանն ուղղված հարցաշարում մեզ ամենից շատ հետաքրքրում էր այն, թե ի՛նչ կպատասխանեին աշակերտները <<Ի՞նչ է նշանակում բարի մարդ>> բաց հարցին: Պատասխաններից պարզվեց, որ բարի մարդը նա է, ով

- օգնում է մյուսներին,
- սիրում է ուրիշներին,
- տալիս է ամեն ինչ,
- անում է ամեն ինչ, որ դիմացինը ուրախ լինի,

- բարություն է անում,
- կատարում բարի գործեր,
- համեստ է:

Այսպիսով՝ մեր կատարած հարցախույզի արդյունքում եկանք այն եզրակացության, որ երեխաները պատկերացում ունեին արժեքների մասին: Այս հարցում մեծ դեր ունեն դասագիրքը, մանկական ստեղծագործություններն ու ուսուցչի մոտեցումը այդ ստեղծագործություններին: Աշակերտներն իրենց տեսակետները ներկայացնելիս մատնանշում էին բազմաթիվ հերոսների, հատկապես առակներից, փորձում հիմնավորել, որ չարությունը վատ բան է, և չարը միշտ պատժվում է: Նկատենք, որ ինչպես առակները, այնպես էլ մայրենիի դասագրքում զետեղված տարբեր ժանրերի մանկական ստեղծագործությունները ձևավորում են նաև այլ արժեքներ, ինչպես օրինակ՝ հայրենասիրություն, հարգանք, հոգատարություն, վստահություն և այլն: Հարցախույզին մասնակից կրտսեր դպրոցականների՝ այս կամ այն հերոսի հիշատակումը մեզ հուշեց որոշ ժամանակ անց մեկ այլ հարցման միջոցով պարզել, թե իրենց ուսումնասիրած ստեղծագործություններից հատկապես ո՛րն է իրենց դուր եկել և ինչո՞ւ: Հարցման նպատակն էր բացահայտել, թե որքանո՛վ էին մեր անցկացնելիք դասերը նպաստելու աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը: Մինչ այդ մեր մագիստրոսական թեզի հիմնախնդրի շրջանակում մի քանի դասավարումներ իրականացրինք՝ փորձելով ստուգել, թե մայրենիի բնագրերը ի՞նչ չափով կարող են ազդել կրտսեր դպրոցականների արժեքային գիտակցության վրա (դասավանդման մեր փորձից մի նմուշօրինակ ներկայացրել ենք հաջորդ ենթագլխում):

Ավելի ուշ հարցախույզի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ աշակերտների մեծամասնությանը դուր էր եկել Սասունցի Դավթի կերպարը, քանի որ նա քաջ էր, գեղեցիկ, ուժեղ, անվախ, հայրենասեր, խիզախ, համարձակ, ազնիվ, անպարտ, հոգատար, հյուրասեր, օգնում էր մարդկանց, խաղաղասեր էր: Գրեթե բոլորը նշել են, որ իրենք էլ կուզեին նմանվել Սասունցի Դավթին:

Չորս աշակերտ նշել էր <<Օջախի հիմքը>> ստեղծագործությունը. նրանք արժևորել էին ընտանիքի անդամների ջերմությունը, հոգատարությունը և պարզությունը:

Երկուսը նշել էին Հայկ Նահապետին, քանի որ վերջինս ուժեղ էր, խիզախ և բոլորիս փրկել է բռնակալ Բելի ճանկերից:

<<Ախ այս Մասիսը>> ստեղծագործությունը նշել է մեկ աշակերտ, որի <<...որովհետև թուրքերը գրավել են և ես ուզում եմ այն հետ վերադարձնել>> միտքը արտահայտում է ընդգծված հայրենասիրություն:

Աշակերտներից մեկն էլ գրել էր <<Հայոց ուսուցիչ>> ստեղծագործությունը՝ նշելով որ ուսուցչին պետք է սիրել ու հարգել, քանի որ եթե հարգես, կհարգվես: Մյուսն էլ առանձնացրել էր <<Չնվաճված աշխարհամասը>>:




Եթե ամփոփենք արդյունքները, պետք է ասենք, որ մայրենիում ներառված ստեղծագործությունները, մեր դասավարումները նպաստել էին աշակերտների արժեհամակարգի ձևավորմանը: Նրանց հիշատակած ստեղծագործությունները, հերոսները ակնհայտ ազդեցություն էին գործել՝ ձևավորելով այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, բարությունը, ընկերասիրությունը, խիզախությունը, ազնվությունը, հոգատարությունը, հարգանքը և այլն: Աշակերտների կողմից այդ արժեքների յուրացումը սոսկ գիտելիքների պարզ կուտակում չէ: Դրանց շուրջ նրանք կսկսեն մտորել, գնահատել, իմաստավորել և վերջում յուրացնել: Աստիճանաբար ձևավորվող դպրոցականն իր արժեքային գիտակցությամբ, մարդկային հարաբերութ-

յուններում դրսևորվող վարքագծով կսկսի ազդել հասարակության առանձին անդամների արժեքային գիտակցության վրա՝ ինքն էլ փոխազդեցաբար ազդվելով նրանցից:

Արժեքների ամրապնդման նպատակով 4-րդ դասարանի աշակերտներին հանձնարարել ենք նաև գրել ստեղծագործական շարադրություն՝ հիմք ընդունելով մեր անցած ստեղծագործություններից առանձնացրած որևէ արժեք: Մեր կողմից մշակված և վարած դասերի արդյունքում եկանք այն եզրակացության, որ մայրենիի դասընթացում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման արդյունավետ մոդելը ներառում է գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցում, վերլուծում, թեմատիկ զրույցների իրականացում, բազմատեսակ առաջադրանքների կատարում և այլն: Դասի ժամանակ իրականացրած մեթոդները նպաստեցին աշակերտների մասնակցությանը,ակտիվությանը նյութի յուրացմանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը, պայմանավորված տվյալ տարիքի երեխաների զարգացման առանձնահատկություններով, որոշակի պահանջներ է առաջադրում նրանց արժեկողմնորոշիչ հմտությունների ձևավորման առումով:
2. Մայրենիի դասընթացը դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորված դասընթաց է, որն իրականանում է կրթության մատչելիության, հաջորդականության, շարունակականության ապահովմամբ՝ հաշվի առնելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները:
3. Փորձագիտական հարցումները ցույց տվեցին, որ մայրենիի դասագիրքը կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հիմքերից է, պարզապես նշված համատեքստում կարևոր են մանկավարժական պայմանները, ուսուցիչների կողմից կիրառվող մեթոդական քայլաշարերն ու աշակերտների վերաբերմունքային պատասխանատվության գործոնները:
4. Մայրենիի դասընթացում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման արդյունավետ մոդելը ներառում է գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցում, վերլուծում, թեմատիկ զրույցների իրականացում, բազմատեսակ առաջադրանքների կատարում և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
3. Հանրակրթության պետական կրթակարգ և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004:
4. Միքայելյան Մ., Զաքարյան Է., Դպրոցական հարմարման հոգեբանական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում, «Հոգեբանությունը և կյանքը», Գիտահանր. հանդես, Երևան, 2013 (1-2):
5. Նալչաջյան Ա., Հոգեբանական բառարան, Երևան, 1984:
6. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1974:
7. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, Երևան, 2010:
8. Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975:
9. Андреева Е.А., Нравственно-правовое воспитание младших школьников: Автореф. дис. на соиск. учен. степ. канд. пед. наук Казан, гос. пед. ун-т. Казань, 2002.
10. Болдырев Н.И., Нравственное воспитание: вопросы теории. М.: Просвещение, 1978.
11. Божович, Л.И. Личность и ее формирование в детском возрасте, СПб., 2008.
12. Вентцель К.Н. Нравственное воспитание и свобода. // Этика и педагогика творческой личности: В 2 т., Т.2.М., 1912.
13. Воспитание у младших школьников ценностного отношения к семье в условиях общеобразовательной школы, https://mir-nauki.com/PDF/67PDMN418.pdf.
14. Гаврилычева Г Ф., Младший школьник и его ценности // Начальная школа. - 2008. - №7.
15. Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019.
16. Люблинская А.А., Детская психология. - М., 1971.
17. Маслов С.И., Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов, Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1